

Աւստի մեծապէս ուրախ և զո՛հ եմք տեսնելով ժողովրդեան այսպիսի հսկող և զործնական համակրութիւնքը և փոյթը, միանգամայն շնորհակալութեանց արժանի կդատեմք և այն անձինքը՝ որք այսպիսի հանգամանաց մէջ ժողովրդեան սգևորող և յառաջընթաց կհանդիսանան՝ ինչպէս որ այս միջոցում ևս Մատրախանու վիճակին մէջ Բարեկրօն Յովսէփ Աւագ քահ. Բու- նիաթեանց և Մկրտում Գ. Սարգիսեանց, ի Գ. Գլար Մեծ. Մարգար Գ. Մամաջան- եանց և Սիմէօն Իգմիրեանց, ի Գ. Ուբա Բարեկր. Աւագ քահ. Ալշարեանց, ի Բագու Բարեկր. Թադէոս Աւագ քահ. Բուդաղեանց և մեծ. Անդամք Խորհրդարանի Մարդասիրական Ընկերութեան հանդիսացած են՝ և մեր խորին շնորհակալութեանց արժանացած, թողու՛մք յի- շե՛լ մասնաւոր անձինքը և նուիրարիութիւնքը՝ որք ի ժամանակին պիտի հրատարակուին:

Այս առթիւ՝ արժանի հատարումք Բագուայ Մարդաս. Ընկերութեան Խորհրդարանէն առ Ս. Ե. Հայրապետ ուղղված մի գրութիւնէն հեռեեալ պարբերութիւնքը քաղել և հազորդել ողջամիտ Ազգայնոց՝ ինչպէս ի Բագու՝ նոյնպէս ամեն տեղ հարազատ Հայորերոյն վերայ՝ ճեմարանի արկածին պատճառաւ տեսնուած տպաւորութեան և զգացմանց համար մի զաղափար տալոյ նպատակաւ:

Ահաւասիկ Խորհրդարանի զբաժէն քաղուած պարբերութիւնն:

« Աեմափառ Տէր, երբ որ սուրբ Էջմիածնայ նորակառոյց ձեմարանի կիսոյ մասին այրման դուժն հասաւ Բագու՝ Ընկերութեան Խորհրդական Անդամոց սրտից վերայ մեծ տպաւորութիւն և տրամուծին

ներգործեց. բայց ունելով ի նկատի, որ մեր սիրելի ազիը այդպիսի տրամուծի ղէպբերում ոչ մի ժամանակ չի մնացել և չի մնալ անտարբեր, նորա չըվնասեցան, այլ իսկոյն առորագրութիւն բացեցին անդադս հասարակութեան մէջ՝ և միջնորդութեամբ իւրեանցից ընտրած երկու Խորհրդական Անդամոց Գրիգոր Թումանեանցի և Գրիգոր Ս. յաղեանցի, ժողովեցին. բաց ի Մարդասիրական Ընկերութիւնից ընծայած հարիւր ռուբլոց, երեք հարիւր տասն և չորս ռուբլի: Վերոյիշեալ դումարը՝ որ ընդ ամենը 444 ռուբլի հանդերձ անուանական ցուցակու առաքելով ընդ ամին առ խմբագրութիւն Արտատամագրոյ, Անդամ Խորհրդոյ ամենհպատակօրէն խնդրում են ընդունել այս փոքրիկ նուէրը ի նշանօրդական սիրոյ և զգացմանց՝ որ միշտ Հայկազեան տամբը ունեցել է առ իւրեանց ազգասէր և բարեխնամ Հովուապետ »:

**Ս. ԳՐԻԳՈՐ ՏՆԹԵՒԱՅԻՈՅ ԳԵՐԵԶՄԱՆ.**

ԽԻՔՈՒՆԻՆ ԱՐԵՎԻ ԵՆՔՈՅ.

Հուշակաւոր Մենաստանն սրբոյն Ստաթէի առաքելոյ՝ որ ի Սիսական աշխարհի՛ դարուտր ժամանակաց հետէ կարձանանայ Ազգային հնազոյն Պատմութիւն, իրրեւ կոթող մի պարծանաց հընասէր արգոց ճանապարհորդք լի մեր Ազգայիններէն և թէօտարներէն, երբ մուտ գտած են յայ աշխարհ Սիւնեաց բազմաթիւ և անհամար հընութեանց նուիրական նշխարացն պատկառելի և կարեկից այցելութիւն մի անել, ուր որ ականբեր կը բացուին այցելուաց առաջին ել բեմն սխրալի հանդէս կրօնի և ճշմարիտ աստուածպաշտութեան և աննուածելի արիական կորովութեանց զիցացն նախնեաց մերոց Պայազատաց, և երբեմն տխուր տեսարան գործոց Պարսկական դրօշակի բայց քան զամենն՝ պատուելի ճանապարհորդք հարկաւ:

են համարել նախ այց կանել սրտոյ Մենաստանիս  
 և ի իրանց մտադրեալ գործերն ստ տեղէն սկսել,  
 աքնաատեսութեամբ ճշգիւ համարադատութիւն  
 անել պատմական ստուգութեանց, զորս ուղիղ է՝  
 զի լոսած են և է՝ զի կարգացած այլ ճանապարհ  
 հորդների գրուածները:

Ներկայ տարուցս մէջ շտրհ աւնեցայ ընդունել  
 ի սուրբ Վանս մի պատուելի հիւր Գերմանացի  
 ճանապարհորդ Չելզելի ազգանուն, որ իւր անձը  
 նուիրելով պատմական հետ թեանց անցերոց՝  
 կաշխատէր աննաճիշդ տեղեկութիւններ ժողովել  
 զանազան ազգաց վրայոք, որոնք կարող էին իւր  
 կան հանդիպել, բայց առաւելապէս ճիգնթափ ե-  
 դած էր աննաստոյգ տեղեկութիւն ունենալէ Հայոց  
 ազգի անցեալ դարերու՝ նոյն և ներկայիս ազգա-  
 լին ստօրութեանց, քաղաքական անցից և կենաց  
 և եկեղեցական արտօնութեանցն որով և այդ-  
 սիսեաւ մարդասէր բուն եռանդեամբ ամենաօգ-  
 տակար ծառայութիւն մի անել, առաւելապէս  
 Հայոց ազգին որոյ փառաւոր Հայրենաց հընու-  
 թիւնը անցելոյն փոշիներուն միջէն գտելով՝ ըստ  
 կարելոյն կենդանացնելու շարժումն տալ նոցս,  
 ապա իւր ճանապարհորդութեան պատմական ու-  
 կեզօծ էջերը շարահիւսելով՝ Հայկազեան դեցազ-  
 ների պանծալի գործոց յիշատակներովն՝ իրրև  
 փունջ մի գեղեցիկ անուշահոտ ծաղկանց նուիրել  
 ըստարեւելոյն Ներսիսի Շնորհակալութիւն յան-  
 շափս այս մեծ մարդոյն:


Պարոն ճանապարհորդն՝ ինչպէս տեսի իւրեան  
 ձեռնարկ ունելով՝ յառաջ քան զինքն՝ ճանա-  
 պարհորդների գրուածներն՝ ինքն ևս ըստ այնց  
 կուզողէր և կարուճակէր իւր ստորագրութիւնը,  
 այնու ամենայիւ երբէք զանց չէր աննել մանրա-  
 քննին խո զարկութեամբ կրկին և կրկին ամեն մի  
 կարևոր առարկայն առ տեղեաւն ստուգել, թե-  
 ՚րիան լրացնել, վերապահներն ուղղել ծանօթու-  
 թեամբ նորանոր յաւելուածներ շատացնել պատ-  
 մական ամենաճիշդ տեղեկութեամբ և երբեմն  
 նոյն գրուածքներէն տեղեկութիւն քաղելով, որոնք  
 գլխաւորապէս Հայոց եկեղեցականութեան և ազ-  
 գայնութեան կեկարներին, զանազան հարցեր կա-  
 սաճարկէր ինձ և կենդիւրէր ստոյգ և բաւարար  
 պատասխանիք՝ որպիսի հարցմունքներն Պարոնին

բոլորովին օտարտօսի էին անգուր և միանգամայն  
 ներհակ ոգոյն հարազատութեան Հայ պատմա-  
 գրութեանց, բայց ինչպէս նա պատմեց ինձ և ըս-  
 տուցեցաւ, որ այն աններկի սխալումքներն յա-  
 ուայնացած են վանուցս ժամանակին գտնուած բը-  
 նիկ տեղապի ունանց հոգևորականաց անհմտ  
 պատմութիւններից, որ այնուհետեւ ոչ այնքան  
 իրաւունք էր մեզ մեղադիր լինել օտարականերին՝  
 որքան մերոց, որովհետեւ Պատմութիւնը Հայոց է  
 և պատմիչներն Հայ հոգևորականք, բայց բարե-  
 կամարար խորհուրդ կուտայի դոցա, մինչդեռ ի-  
 րենք անգրասէր էին և չունէին հմտութիւն որ և  
 իցէ գիտութեանց, և եթէ իւրեանց անձնասիրու-  
 թեանցը դիպողական չէին համարել՝ բարւաք էր  
 եթէ այնպիսի բանաստեղծ հետաքրքիր անձանց  
 հարցմանց հանդէպը իւրեանց պատասխանիքն սո-  
 վորարար լինէր «չգիտեմ», բառը որով թէ զի-  
 րենք և թէ զեւր պատմութեանց հարազատու-  
 թիւնը կազատէին օտարների աններկի զրպար-  
 տութիւնից: Թողնելով ընդարձակօրէն նկարագրելն  
 նորա ամեն մի օտարտօսի հարցմունքներն և իմ գգու-  
 շաւոր պատասխանիքը՝ որք ցուցէ ձանձրութիւն  
 պատճառն բանասիրաց, կտրիպիմ՝ յառաջ բերել  
 աստանօր նորա աններկի սխալ տեղեկութիւննե-  
 ՚րից մինը, որ ունէր ի դէմս մարմնոյ ս. բոյն Գրի-  
 գորի Տաթևացոյ, որոյ ամբիօփելն Վանուցս մէջ  
 իսպառ կտէր և կհերքէր հետեւեալ փաստիւք,  
 զորս ասել բարեհաճեցաւ:

«Թէպէտ ամեն մի պատմական անցից հարազա-  
 տութեանց պէտք են ապացուցական ստոյգ փաս-  
 տեր, սակայն առաւելապէս հարուզատ կհամարին  
 այն պատմութիւնքը՝ որոնք գլխաւորապէս հիմ-  
 նուած են և կհիմնուին արձանագրական տեղեկու-  
 թեանց վերայ: Թէպէտ և Հայք զմեծն Տաթև-  
 ւացի կճանաչեն Հայաստանայց եկեղեցոյ ե-  
 բարխտաւոր Արղայաններէն մէկը և ունին զնա  
 միշտ ի յարդի և Հայ պատմարանք ոչ մի օրի-  
 նակ կգրեն նորա կենսագրութիւնը ինչպէս Մլ-  
 խիթար Ապարանցին կրէ թէ՛ Տաթևացին  
 Աւերթոտեան ընկերութեան ջերմեռանդներէն  
 մէկն էր Նրնջակայ գաւառաւոր, թէպէտ կասն  
 վերջին վախճանը լինել Տաթևու Վանուց մեջ,  
 ուր և ամբիօփած նորա մարմնը սակայն մինչ-

« գեա յառաջ քան զիս ճանապարհորդների զը-  
 « րուածոց մէջ կկարգամ և կտուգեմ անձամբ  
 « յանուն Վրիգորի Տաթևացոյ ընծայած դամբա-  
 « րանի վերայ սոյն անուն արձանագրութիւն.  
 « Կառայր սրբոյն Վրիգորի Տաթևացոյ Յովս-  
 « կիմ եպիսկոպոս ևւ Արրահամ վարդապետ եր-  
 « ւբէք չեմ կարող հասնուիլ և հաստալ թէ՛  
 « այն տեղ է թաղուած Վրիգոր Տաթևացին, որոյ  
 « համար Հայք ցայսօր սխօյած են, և Պարսեր  
 « յաւել ասել և գայս թէ՛ « չեմ ներհակել Հայ  
 « պատմագրաց վկայարանութեանցը այս մասին,  
 « զուցէ թաղած լինի Ա. անուցս մէջ՝ բայց ոչ իս-  
 « կապէս այն տեղ, որոյ համար կվկայեն Հայք,  
 « մինչդեռ արձանագրութիւնը օտարների կվերա-  
 « րերի անտարակոյս ։»

Պարսն ճանապարհորդի յառաջ բերած փաս-  
 տին ըստ կրեութիւն արդարեւ կարող էին շա-  
 տերի մտաց շիտթութիւն պատճառել և անհա-  
 բաղատութեան կարծիք Հայ պատմագրութեանց  
 դէմն, սակայն զուցէ նոցա միայն՝ որոնք չունին  
 պատմական հետաքննութիւն և անգիտակ են Տաթևու  
 Ա. անուց մէջ գտնուած արձանագրական տեղեկա-  
 թեանց, բայց մինչդեռ ունեի ես ի պատրաստի թէ  
 պատմաբանական և թէ արձանագրական զօրուոր  
 փաստեր, այս նախատիկը մեծ էր ինձ՝ եթէ ան-  
 սարբերութեամբ լուս մնայի պարսն օտարակա-  
 նի աններկի սխալ համոզմանց դէմն. ուստի ըստ  
 չափու կարեացս աշխատ եղէ հիմնաւոր ապացու-  
 ցութեամբ հերքել նոցա ամեն մի թիւր տեղեկա-  
 թիւնները որոնք մեզ կվերաբերելին, և տալ ուղ-  
 զիլ իւր ներկայ ատարագրութիւնը ամենակարելին  
 ճշմարտութեամբ համաձայն կանոնաց պատմական  
 հարապատութեանց, Թ՛ողներով զայլ՝ յոյժ հար-  
 կաւոր կհամարիմ յառաջ բերել աստանօր զնոյն  
 հերքումն ի դէմն սխալ արձանագրութեան որ ի-  
 վերայ դամբարանի սրբոյն Վրիգորի Տաթևացոյ՝ ի  
 գիտութիւն սիրելի Ազգայնոց մերոց և ի զգուշա-  
 ւոր տեղեկութիւն օտարական հնասիրաց, Բարե-  
 պաշտ այցելուք դամբարանի սրբոյն Վրիգորի Տա-  
 թևացոյ՝ կտեսնեն նորա վերայ տապանաբար մի  
 ըստ այսմ՝ ձեռոյ.



ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՎԱՅԻՆ:

Տապանաբարի միջի ազուցած մարմարինեայ  
 հատուածն է գործ յետագայ ժամանակի Յովա-  
 կիմ եպիսկոպոսի և Արրահամ վարդապետի իսկ  
 հասարակ տապանաբարն՝ որոյ շրջանակի վերայ է  
 հնադոյն ձևով արձանագիր յանուն Տաթևա-  
 ցոյն՝ է նախկինն և իսկականն. եթէ մինչև ցայ-  
 սօր շատերին երկրայութեան կարծիք է պատճառել  
 մարմարոնեայ քարի վերայ եղած արձանագրու-  
 թիւնը՝ պատճառը այն է, որ սուրբն Վրիգոր  
 Տաթևացի թաղուած լինելով Տաճարի հարաւա-  
 յին դրան մէջ և միշտ ամուսկոխ եղած, Հայկա-  
 կան ՌՒՄԼԶ թատին՝ յաուրս Հայրապետու-  
 թեան որոյ զահին Կյմիածնի Տեառն Առկառու՝  
 Յովակիմ եպիսկոպոս Պապ կոչեցեալ, ծախիւք  
 Բոնակոթմցի բարեպաշտների արտաքուստ կուսէ  
 նման սագսձե եկեղեցոյ սրբատաշ քարանք մա-  
 տուս մի շինել կուտայ գերեզմանի վերայ կից որ-  
 մանը և իսպառ կծածկէ դուսը որ այժմ ներ-  
 քուստ կոչմանէ Տաճարին իբրև պահարան կը-

ձեւանայ բայց շինող վարպետն տապանաբարի երկու կողմանց շրջանակներն՝ որոյ վերայ է յանուն Տաթևացւոյ արձանագրութիւնն, անդիտութեամբ կրամած զանգուածով իսպառ ծածկելով՝ միջին մարմարիանեաց հաստուածոց վերայ այլ անուն արձանագիրն միշտ երկբայութեան կասկածներ են առեղ հանդիպողաց և ստեղ ճշմարտութիւնը՝ սոյն իսկական արձանագրութիւնը ոչ թէ շատերին այլ և տեղացի Միտրաններին անգամ ցոյսօր ժամանակի անդիտելի էր, ուստի եթէ կախորժես՝ սուր միակ բունն հետաքրքրութեանս՝ որ կրամած զանգուածն քանդելով և մաքրելով, կարողացայ յերևան բերել շրջանակաց զժուարձութեանցի հնաոյն արձանագրութիւնը յանուն որբոյն Գրիգորի Տաթևացւոյ ի միշտ հերքումն և ի լուծումն տարակուսանաց բազմաց:

Բայց թէ ո՞ք ոմանք էին Յովակիմ՝ եպիսկոպոսն և Աբրահամ՝ վարդապետն, որոց անուանքն գրած են մի և նոյն Տաթևացւոյ տապանաբարի վերայ լսեցէք, ահա պատեմ՝ ձեզ:

Տէր Աբրահամ վարդապետն, որ և եպիսկոպոս էր՝ տեղեաւ Աստուածատեցի և բնիկ միաբան որբոյ Քաջին Էջմիածնի ընկերակից Սիմեօնի Աբրազան Վաթուղիկոսի ամենայն Հայոց քրտան տարի աւելի նուիրակութիւն անելով ի Հնդկահայս՝ ի մեծն Պօլիս՝ ի Վարին, և ինն ամ առաջնորդ կալով Չմիւռնոյ վիճակին, իւրով հոգեբուղիս վարդապետութեամբ արար բազում ուղղութիւնս և բարեկարգութիւնս եկեղեցւոյ շարադրեց համեղ ոճիւ քարոզագիրք, բազմամիւ հոգեցատուր յիշատակօք փարթեմացոյց սուրբ Տաճարն Էջմիածնի որմնք ցոյսօր ևս պահուելով ինձօք՝ կենդանի քարոզ են աննահ անուանը Սա աննելով իսպառ դատարկանալը որբոյ Վասուցս Տաթևու յուսանց և ի գիտութեանց՝ որ Հայոց աղղի համար երկրորդ Աթէն էր համարուած, ուստի իրբն ճշմարիտ նախանձախօյլի Աստուածայի՛ օրինաց և սիրող իմաստութեան՝ հրամանաւ Աբրահնագոյ՝ Վաթուղիկոսի Սիմեօնի ի թուին Հայոց ՌՄԻԿ, ստանալով Սիւնեաց վիճակի Առաջնորդութիւն՝ կիւլմայ ի Վանս կը հաստատէ զպրոցոյ պատրաստելով ուսեալ բարեկիրթ աշակերտներ յառաջոյ պարսոյն Վանաց

յարեկից կուսէ 111 կանգուն երկայնութեամբ կրամած կոխածոց քարաբ կարսուէ, ուր և կից պարսպին կշինէ 16 թուով սենեակներ, Երկու ամ և երեք ամիս խաղաղութեամբ կալով ի Վանրս ուր և կնքելով իւր աղցաւոր կեանքը ի ՌՄԻԶ թուին ի հասակի 65 ամաց՝ խաչակիր մարմին նորս կթաղուի առաջի զարմանաչէն շարժուն գաւազանի\*): Յովակիմ՝ եպիսկոպոսն էր տեղեաւ Ծրդուկ գաւառէ Անգեղակոթ գեղջէ աշակերտ գերըզգօն Արրահամու վարդապետի որոյ հետ զալով ի Վանս՝ նորս վախճանէն յետոյ ըստ ինդրանաց միաբանից Վանաց և առաջու որաց Սիւնեաց վիճակի՝ ձեռնագրուելով եպիսկոպոս ի Սիմեօն Վաթուղիկոսէն ի ՌՄԻԶ Հայոց թուին, կանոն Առաջնորդութիւն Վանացս ուր և լինթացս տասնամեայ առաջնորդութեան կանէ զանազան շինութիւնս և բարեկարգութիւնս ապա երբ Աղա-Մահ-մատ-Խանն մուտ կգործէ Սիւնեաց աշխարհն և կաւերէ բովանդակ երկիրը, սակս փոխատեոյ կը գնայ իսուրբ Էջմիածնն, ուր և 19 ամ մնալով՝ կվախճանի և կկրուի ի հանգստարանի միաբանից Բայց թէ ի՞նչ պատճառաւ այս երկու անձանց անուններն արձանագրուած են որբոյ Գրիգորի Տաթևացւոյ տապանաբարի վերայ՝ ահա ստեմ:

Ինչպէս Վաղար Վաթուղիկոսն Քաջկեցի Սիմեօն Վաթուղիկոսն Երևանցի նոյնպէս և սորա՝ Աբրահամ վարդապետն և Յովակիմ՝ եպիսկոպոսն իրեանց Աստուածաբանական գիտութեան և վարդապետական ուսմանց մասին՝ կհամարին զիրենք ուղղապէս սերեալ յաշակերտութենէ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ որ ուստի վերջին ժամանակներն իրբն երախտագիտական փոխարինութիւն նմին՝ Յովակիմ՝ եպիսկոպոսն երբ կշինէ նրա վրայ մատուան և կը զարդարէ տապան մարմարիանեաց քարի՝ մեծ պատիւ կհամարէ թէ իւր վարժապետ Աբրահամ — վարդապետի և թէ իրեան անունը ծառայական անուամբ փոխադրել տալ

(\*) Այս շարժուն գաւազանի վերայ նամակագրին ուշադրութիւնը որաւրեքով կենդանի պատմական տեղեկութեամբ և մտորման եկարագրութեամբ հարցող խմբագրութեան:

Եթէ կարելի է, շարժուն գաւազանի մեծ ևս նկարուի և ի միտին իրկուի:

նոյն մարմարիան քարի վերայ թէպէս սորա կարմանէ՝ զույգ միամտութիւն կործնել, բայց ժամանակ անցնելով՝ մեծ սխալանաց և պայթակղութեան խնկապէս առիթ է եղել բազմաց և անհաւատարմութիւն առ սուրբ Աւարդագեան: Այսուամբ այս մասին Հոգևոր Իշխանութիւնը բարեհաճ անօրէնութիւն մի կանէ ուղղել սոյն աններկի վրայմուշքն Յովակիմ՝ եպիսկոպոսի:

Իսկ թէ Խաչի շրջանակին  $\frac{9-10}{11}$  տասերի նշանակու-

Ք.Պ.Տ.

թիւնը ի՞նչ է, պայտէս կրացապ հմ՝ որ են շորից աւետարանչաց գրոց սկզբնաւորութեանց զխատառերն՝ զոր օրինակ՝ Գիրք Տննդեան Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Քանցի բազումք յօժարեցան, Ի սկզբանէ էր բանն. և Ք. Պ. Տ. տասերն կնշանակին Քահանայապետ Գրիգոր Տաթևացի:

ՍՏԵՓԱՆԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻԹԱՐԵԱՆ.

Ի 21<sup>ն</sup> Գեղարքէզի 1874 - օր

Ի Վան Տաթևացի.

ՍՈՐԸԱՆՊԱԿԵ ԲԻԹԼԱՆՊԵԱՆ.

Հ Ա Յ Ր

Ի ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ ԵՒ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ

ՎԱՅ ԵՒ ԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՅ ՄԷՁ.

(Շարունակելու և վերջ)

Հայք, որոնց վրայօք ցարդ խօսեցար և որոնք մասամբ՝ մի և նոյն ժամանակ Հունգարացոց հետ՝ գրեթէ Հունգարացի առաջնորդաց և Արքատեան տան թագաւորաց ժամանակ ծաւալեցան երկու Հունգարական երկիրներու մէջ, և թէ նոյն պատմական յիշատակութիւնը հանելու ըլլանք, որն որ Հունգարական ժամանակագրութեանց և Գեոգրամադիտական Հաւարածոյից մէջ նոյնին վրայօք յառաջ կուգայ նաև սեղեց

անունները որոնք ազգային անունը կը հնչեն, մնացեալներուն մէջ՝ երկու երկրին մէջ ալ առանց ընկճման մարեցան և կամ ուրիշ ազգաց մէջ ձուլուեցան:

Գարձեալ թէ ինչպիսի ճոխութիւն ունէր վաղ ժամանակ Հայ անունը Հունգարացոց և նոցա Արքատեան — տան թագաւորաց առջև, կը վկայէ Կրօնօղէմայ Անդրէաս թագաւորին գործքն, որպէս զի արեւելք սոք կոխել կարենար համանուն որդին զԱնդրէաս՝ Աւան Հայ թագաւորին զտեր հետ նշանած էր այնպիսի պայմանաւ, որ Հունգարացի թագաւորը Աւանին ժառանգ ըլլայ Անտոքոյ պետութեան զահուն, և մինակ Աւանին տարածամ մահը արգիլեց երկու արքունեաց և երկու ազգաց մէջ տեսակցութեամբ զիտուած ամուսնութեան կարի սերտ կապը — կը գրէ Աւստրիացոս Սալաի:

Բ.

Արդի Հայք այլ են՝ առաջիններէն միայնացեալ և տարբեր ժամանակուան մէջ և պատճառաւ Հայաստանէն յառաջ եկած և Առտեալի մէջ տարածեալ Գաղթականաց մնացորդները որոնց ծագմանը վրայօք ինչպէս պատմութեան մէջ՝ նոյնպէս Ազգային աւանդութեան մէջ սոցոյց և առանձին պատմուած թուականներ ունինք՝ քան վերոյիշեալ հնոց վրայօք:

Գիտենք՝ թէ 1672-ին եկան Առտեալ, զիտելք նաև՝ թէ Ասիոյ հայրենեաց որ տեղւոյն և քաղքին երբեմն բնակիչք էին, կը ճանչնանք պատճառները որոնք զիրենք իրենց նախնական հայրենիքը թող տալու և նոր հայրենիք փնտտելու շարժեցին: Մնաց այն յիշատակը բազմատեսակ վտանգներուն որոնք երկար ճանապարհին վրայ՝ ալ և ոյլ աշխարհաց և ճանապարհաց և ազգաց մէջ զիպեցան, մինչև վերջապէս Առտեալ հաստատուեցան:

Առտեալի Հայք ըստ միաձայն վկայութեան մեր հաւատարիմ պատմական թուականին և աւան-

(1) Պատմութիւն Հունգարաց. Ա Հատ. էջ 502 և 505: